


ՏԱՃԱՐ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 18 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 23

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. — Ս. ՆԵՐՍԷՍ ՊԱՐ-
ԹԵԼԻ յԻշատակին

ԳԱԶՐԻԿ

ՄՈՒՆԵՐԸ (ՔԵՐԹՈՒՆԻ)

ԴՊԲԵՎԱՆ ՔՅԻ

ՇԻՐՎԱՆՊԱՏԵՐԻ ԴԻՐՔԸ ՌԱԿԱՏԱԿԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՊԱՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Մ. Յ.

ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱ-
ՆԵՐՈՒ ժամանակուան պատմութիւն (ՇԱՐ.)

ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅ

ՄՈՒՆԵՐԸ ԵՒ ԵՄԵՐՍՈՆԻ ՄԵԾԱԳՐՈՅԻՆ ԽՈՐԻՈՂՆԵՐՈՒՆ
ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԸՐԾԻԿ

ԽԱՅԻՍՏԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ԿՆԱՆՔԸ. — ՇԱՐԹՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ

ՀԱՍԿԱՔԱԶ

ՀԱՅ-ԽՈՒՄԵՆԻԱՆ ԺՈՂՈՎՐԴԸ ԹԵՐԳԵԱՆԻ ԴԷՄ



Տպագր. Տ. ՏՈՂՐԱՄԱՆԵԱՆ

Սուրբ-Համալ Մօրա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ



“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺՄԱՆ ՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ և Գաւառաց՝ տարեկան	40 դրուս
Արասահմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օղար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺՄԱՆ ՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆԱՅԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գիտնել առ Զարմայր Բանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիքաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمق كليساسنده «داجار» غزتهسى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐԾԱԼԹԵՐԹ

ԱՆՂԻՐԻՍՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ.
զոս Վրդ. Դաֆթանեան
ԱՅԵԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պօղար-
եան
ԱՅԻԾՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեպոս
ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարգէն Եսո.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան
ԶՄԻԻՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սպատէթեան
ԿԻՐԱՄԱՆ. — Մանուկ էֆ. Թորքաւեան
ԿԻՐՄԻԼՃԻՆԷ. — Տ. Նկրսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պրապեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տապեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէնեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԷՔԻՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրճ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՈՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵՔԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմշա-
պուհ Բհնյ. Դիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ. — Տ. Տանատ Բհնյ. Դերձակեան
ՅՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նշանեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 18 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 23

ԵԿԵՆՅԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Ս. ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պատրիարքարանք Նախարարութեան մը ջափ կրեւոր գործեր ունի, որոնք կը պահանջեն մի որ կորովի Պատրիարք մը: (Ծրագիր Աշարիւթեան):

Լաւ չեմ' յիշեր թէ ո՛ւր կարդացած եմ, բայց իմ վրայ մեծ տպաւորութիւն թողած է այն խօսքը թէ «վեղարի աակ քաղաքականութիւն չսեղմուիր»: Մեր պատմութեան ամբողջ ընթացքին շատ անգամներ իր գործնական հերքումը ընդունած է սրգէն այս յայտարարութիւնը: Բայց ո՛րքան թուրքիոյ ազատութեան շրջանէն առգին յեղյեղունեցաւ քաղաքական գործերու մէջ եկեղեցականներու նուազագոյն չափով մասնակցութեան անհրաժեշտութիւնը, որքա՛ն աւելի չափով երեք տարիներէ ի վեր ընդհանուր ազգը զբաղեցաւ այս կամ այն բարձրատիճան եկեղեցականին անձովն ու գործերովը, այնքա՛ն աւելի զգալի եղաւ կարծես՝ թուրքիոյ ներ-

կայ կազմին եւ գրութեան բերումով թերեւս՝ կարող, քաղաքագէտ եկեղեցականի պահանջը: Այս պէտքը շեշտուած տեսանք մենք մասնաւորապէս անցնող երկու եօթնեակի ուրբաթներուն գումարուած Ազգ, Երեսփ, Ժողովի վիճաբանութիւններուն, եւ մասնաւորապէս Սթամպուլեան էֆի պարզած ծրագրին վերը նշանակուած խօսքերուն մէջ:

Այս պահանջն ու պէտքը ներկային ու այսօրուան չէ միայն, եւ ոչ ոչ ուղիւ տարագոյնն ու վաղուանը: Հասկանալի միշտ գոյութիւն ունի եւ պիտի ունենայ, որքան տառն որ Հայ. եկեղեցական անկախութիւնը՝ ինքնուրոյն վիճակ մը տուած է եւ կուտայ մեր ազգին: Աւելի էականը, անշուշտ, այդ պէտքը լրացնելուն մէջ կը կայանայ, եւ ահաւասիկ այդ կէտն է որ գեո, ո՛վ գիտէ, որքա՛ն ատեններ մեզի գոչել պիտի տայ. «Երանի՛ թէ Ներսէս. ներն ու Սահակ Մեսրոպները բազմաթիւ ըլլային այս ազգին մէջ»:

Ներսէսները: Կանգ տունենք պահ մը, բայց ո՛չ, ծնրագրենք անոնցմէ առաջինն եւ մեծագոյնն առջեւ:

Պարթեւական այն Տիտանը՝ որուն պաշտամունքին եւ տօնախմբութեան յատկացուած է այս օրը՝ ամբողջ ազգի մը երկունքի շրջանին ծնունդն է՝ որ իր կարգին երկնած ու ծնած է ազգ մը ողջոյն։ Թէ ինչպէս. ահա. ւասիկ.

Հայ նորահաստատ Բրիտանիոյ թիւնը տագնապալի շրջաններ կը բուրդէր, իր վերջնական յաղթանակէն հազիւ կէս դար վերջ։ Տրդատի պայագասները եւ Լուսաւորչի Տոհմը շուտով սկսեցին բաղխումներ ունենալ, քանի որ դեռ Հայ հեթանոսական բարքերն ու սովորութիւնները բոլորովին չէին կործանուցած իրենց հմայքը. եւ մէկ կողմէ՝ յունական թովիչ հրապոյրներն ու միւս կողմէ՝ պարսկական ճնշող ազդեցութիւնները կը ջանային իրենց կողմ գլտորել այն կռուականները՝ որ հակառակ իր բոլոր գեղեցկութիւններուն, Հայաստան աշունքը կրելու եւ հասարակաց ճամբան իյնալու դժբախտութիւնն էր ունեցեր։

Այս դժբախտութիւնը կտրելի եղածին չափ մեղմացնելու եւ ազգի մը տխուր ճակատագիրը մոռցնելու համար, թերեւս, մեր պատմութեան մէջ կ'երեւան հազուագէպ գէմքերը Լուսաւորչի շառաւիղներուն, որոնց անձը որքա՛ն սուրբ եւ պաշտելի, դործն ալ այնքա՛ն աւելի հրաշալի եւ արգիւնալի կը լինի։ Անոնք որ նախապաշարուած են միշտ այն գաղափարով թէ Եկեղեցին եւ Պետութիւնը հանապազ անշատ պէտք է գործեն, նկատի թող աւնեն եւ ուսումնասիրեն Ս. Ներսէս Ա. Պարթեւ հայրապետըն ու իր ժամանակը՝ կրօնապէս եւ քաղաքականապէս։

Կեսարիոյ եւ Կ. Պոլսոյ մէջ կըրթուած եւ ուսում առած, Հայոց արքունիքին մէջ զինուորական մարզանք

ստացած եւ բարձր պաշտօնի մը տիրացած, ազնուական սերունդի մը հետ ամուսնութիւն կնքած եւ Հայերը շատ լաւ ուսումնասիրած, անոնց բոլոր պէտքերուն եւ կարողութիւններուն քով գիտակ անձնաւորութիւն մըն էր արդէն Ս. Ներսէս, երբ 364ի Հայութեան միահալոյն բաղձնաքով իր հաւուն՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի դահլ բարձրացաւ։ Իր առաջին գործը եղաւ անշուշտ Աշտիշատի եւ Վաղարշապատի մէջ գումարուած ժողովներով բարեկարգել՝ Ա. Եկեղեցական կազմը եւ Բ. Հանրային բարոյականը։ Առաջինին համար հաստատեց նախ Հայ Եկեղեցւոյ անկախութիւնը՝ Յուսական Եկեղեցիէն՝ վարչական տեսակէտով, (դաւանականին մէջ համաձայնելով անոր հետ), եւ ապա կարգաւորեց վանքերը, մենաստանները եւ ճգնարանները։ Երկրորդին համար հիմնեց վարժարաններ, հիւրանոցներ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, ուրկանոցներ եւ դեռ ուրիշ այլ ինքնամ ու որբախնամ հաստատութիւններ՝ որոնց բոլորին ալ նպատակը պիտի ըլլար բարձրացնել մեր ազգային զարգացումին եւ յառաջդիմութեան մակարդակը։

Եկեղեցական եւ ազգային այս ներքին բարեկարգութիւնները՝ մօտաւորապէս քսուորդ դար մը գոնէ շատ լաւ պիտի կրնային զարգացնել ու յառաջացնել մեր ազգը, եթէ արտաքին յարաբերական խնդիրները չղբաղեցնէին Սուրբ Հայրապետը։

Բայց շատ որոշ կ'երեւի մեղի սա պարագան թէ ո՛չ Լուսաւորչի եւ ո՛չ իր յաջորդները մինչեւ Ներսէս Ա. այնքան պատահութիւն չին ունեցած քաղաքական գործերով զբաղելու, որքան Ինք Պարթեւ Հայրապետը։ Դիցուք թէ Հայ. նորահաստատ Եկե-

ղեցիին առաջին Հայրապետները մի-
ջոց չունեցան այդ խնդիրներով զբա-
ղելու. բայց ոչ նուազ 'ներսէս' բոլո-
րովին նուիրուած մը — բառին բովան-
գակ նշանակութիւնով — Եկեղեցիի կազ-
մակերպութեան գործին, առիթ չգլու-
նէր թերեւս այնքան յաճախ շրջելու
Կ. Պոլսոյ արքունիքը եւ անոր արքսո-
րավայրերը, հայ թագաւորական վրա-
նին շուրջ եւ անոր բանակներուն մէջ,
եթէ իր անձը բազմապատկած չլլար
Եկեղեցիի եւ Ազգի սիրոյն համար :
Եւ տակաւին պէտք է յիշել իր սրբա-
զան եւ բազկատարած աղօթողի սըր-
տագրաւ տեսարանը 'նպատ լերան
գազաթը, երբ իր մաղթանքին առա-
ջին բառին հետ կը սկսէր Զիրաւի
ճակատամարտը :

Բայց ալ բա՛ւ էին իր հասնում-
ները : Կեանքին պայքարը դիտաւարտ
կը զգեստէր վերջապէս Հայ. Եկեղեց-
ւոյ յառաջնութեան մարտիկներէն թե-
րեւս զօրեղագոյնը : Իր վարած բազ-
մաշխատ եւ վշտաշարժար կեանքը կը
թունաւորէր եւ կը մահացնէր իրեն
անձը, բայց ազգին կը մատուակէր
եւ կը բաշխէր Սահա՛յ-Մեսրոպի Դըս-
րոցը :

Հիմա, ուրեմ'ն, Հայ քրիստոնեա՛յ,
վերակենդանայնենք իր յիշատակը,
որքա՛ն ալ իր անձին արիութիւնը եւ
իր մեծագործութիւնները պէտք չու-
նենան ասոր. վասնզի գիտե՛ս անշուշտ
թէ իր մահէն 900 տարիներ վերջ մի-
այն գտնուած են իր նշխարները, եւ
այդ առիթով երգած է Յովհ. Երզն-
կացի Պիւղ վարդապետ իրեն ձօնուած
«Որ զլոյս անճառ» շարականը : Բայց
իր շիրիմէն, իր նշխարներէն աւելի,
գիտեմ թէ գուն սքանչացեր են անոր
անձին եւ զգրծերուն այն հրաշալի
ազգեցութիւնով, որ կրցեր է եւ տակա-
ւին պիտի կրնայ մեզի տալ կաթողի-
կոսական Գահին ու Պատրիարքական

Աթոռներուն վրայ զարգացած, փորձա-
ռու եւ անխա եկեղեցականներ՝ ճշ-
մարիտ ներսէսներ՝ որոնք միայն ան-
քոյթ պիտի սրահեն Ազգ-դ ու Եկեղե-
ցիդ :

ԳԱԶՐԻԿ

Մ Ո Մ Ե Ր Ը

Ոսկի կայծեր կը վառին
Շրթներէն նուրբ ու սիրուն
Մնդուսագեղ մոմերուն,
Ծուխերուն մէջ բուրվառին :

Կը պլպլան, կը շողան
Լոյսերն հոգեքոս մոմերուն,
Երգերն ինչպէս կը դողան
Ուխտաւորին շրթներուն :

Լեզուներ են թաւիշի,
Խունկով բոյրով միշտ օծուած,
Որոնց գոգը կը մաշի
Երազներու վերջին կայծ :

Սեղանին վրայ, խաչին մօտ,
Ոսկի բոցեր կ'երեւին
Արշալոյսին պէս քրքմոտ
Որ կ'օծէ աչքն Արեւին :

Մոմ'եր, կայծ մը հոգւոյս մէջ
Բերէք ձեր վառ շրթներէն.
Երազներու՛ լոյս մը պերճ
Երջանկութեան եթերէն :

ԴՊՐԵՎԱՆՔՑԻ

«ՏԱՃԱՐ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ ըլլալով կ'ազդարա-
րենք իրենց բաժնեգիրն ցարդ չվճարող
բաժանորդներուն թէ պէտք է մինչեւ
ներկայ յունիս ամսոյ, այն է այդ շրջանի
Ա. վեցամսեային վերջը իրենց հաշիւը
մաքրեն կա՛մ ուղղակի թերթիս խմբա-
գիր անօրէնին եւ կամ մեր գործակալ-
ներուն հետ : Նոյն թուականէն անդին
անվճար մնացած թերթերու առաքումը
պիտի հարկադրուինք դադարեցնել — Դրամ
զրկելու գիւրին եւ ապահով միջոցն է
վանճա-բօսը, որուն վրայ եթէ զրկողին
անունն եւ հասցէն որոշակի գրուի, նա-
մակ գրելու իսկ պէտք չկայ :

ՇԻՐՎԱՆՋԱՏԷԻ ԴԻՐՔԸ
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Մ Է Զ(1)

Ազատականութիւնն բողոքման երկ
կրորդ շրջանը գեղարուեստական գրակա-
նութեան մէջ իր արտայայտիչը ունեցաւ
յանձին Բաֆֆին Եթէ կ'ուզէք, վիպագ-
րութիւնը՝ բառիս բնէն մտքով՝ ՌուսաՅայոց
մէջ կը սկսի Բաֆֆիով: Հայ վէպի այս
տիտանը՝ Տանգիսացաւ նաեւ Շիրվանդա-
տէի անմիջական նախորդը, գուցէ և անոր
ուսուցիչը, դո՛նէ ասոր սկզբնական քայլե-
րուն:

Բաֆֆին մեր մէջ միտումնաւոր վէպի
ամենագլխաւոր ներկայացուցիչը դարձաւ,
բայց նա այս բանը հասկցաւ խիստ միա-
կողմանի կերպով՝ այնպէս որ յանուն իր
ձգտումին, Բաֆֆի իր գրական գործու-
նէութեան որոշ շրջանին մէջ բոլորովին
անուշադրութեան մատնեց իր գործե-
րուն գեղարուեստական մշակումը: Եթէ
Սիւննեքեհի կարող էր իր «Յո՛ երթաս»
վէպին մէջ կաթոլիկական ձգտում գտնել,
բայց իր գործը ամենեւին չզրկել գեղար-
ուեստական բարձր արժանիքէ, Բաֆֆի
չկարողացաւ այդ ընել. անոր համար ա-
զատագրական քարոզը և Արծրունիի ազա-
տական գաղափարներու արծարծումը այն-
քան կարեւոր բաներ էին, որ նա ուրա-
խութեամբ գեղարուեստը զո՛հ կը բերէր
քարոզին: Կարելի է ըսել որ իր գործու-
նէութեան որոշ շրջանին մէջ, նա գեղար-
ուեստը կը համարէր լոկ իբր միջոց իր
գաղափարները արծարծելու համար, ա-
ռանց հոգ տանելու գեղեցիկի մասին:
Թէ նա կարող էր բարձր գեղարուեստա-
կան գործեր տալ, ասոր ապացոյց են
անոր սկզբնական վէպիկներու մէջ նկարա-
գրուած բազմաթիւ դէմքերը՝ շատերը ա-
տոնցմէ նոյն իսկ շատ սակաւ գծերով,
բայց խիստ ցայտուն կերպով պատկերաց-
ուած, անոր մեծ վէպերուն մէջ ցրուած
բազմաթիւ գեղեցիկ կտորները, անոր

ստեղծած թիւերը: Բաֆֆին՝ մինչեւ հիմա
մեր մէջ միակ վիպասանն է որ թիւեր է
նկարած: որոնք հասարակ անուններ են
դարձած: Ինչպէս քաւոր Պետրոս, Տէր
Թադէկ, Թոնաս Էֆէնդիւ Եւ Եթէ առուես-
տը քիչ մը աւելի գնահատէր և քիչ մը
աւելի խնամքով կ'երաբերուէր իր գործե-
րու արտաքին մշակութեան, համարձակ
կարող ենք ըսել, որ Բաֆֆի կուտար գոր-
ծեր, որոնց բարձրութեան չէր հասներ մին-
չև այժմ ոչ մէկ հայ վիպասան՝ «Կայծեր»,
«Խենթ», «Ջալալէդդին», «Սամուէլ»
մէջ Բաֆֆին արդէն այնքան կը տարուի
իր ուսուցողական ձգտումով, որ բոլորո-
վին խախտելով իր գործերու գեղարուես-
տական համաչափութիւնը և ամբողջու-
թիւնը, կը սկսէր ընթերցողը զբաղեցնել
իր հերոսներու այնչափ երկար ճառերով,
որոնք մէկ մէկ դասախօսութիւն են երկրի
անցեալ և ներկայ վիճակի, քաղաքական
կեանքի, ընկերային ծրագիրներու մասին:
այդ տեղ կը գտնէր զուտ պատմական ու-
սումնասիրութիւններ (Սամուէլ), տեղա-
գրական, հնագիտական, պատմագիտական
ընդարձակ ծանօթութիւններ, երկար, շատ
երկար, բանաստեղծական գործի մէջ ան-
թղլատարելի չափերու հասցում, գիտա-
կան գործի միայն վայել եղանակով տար-
ուած: Անոր երկերու այս գիծը, միացած
անոր գեղարուեստական ստեղծագործա-
կան հսկայ տաղանդի հետ, Բաֆֆին կ'ը-
նեն մի այնպիսի խառնուրդ, որ մարդ կը
դժուարանայ անոր գործերէն մէկուն կամ
միւսին վրայ կանգ առնել, և զայն յանձ-
նարարել իբրեւ մի գեղարուեստական երկ՝
առանց պակասութեան:

Բ.

Ահա ասոնք են Շիրվանդատէի նա-
խորդները՝ հայ վիպագրութեան մէջ:

Արովեանը իր Աղասի քաջութիւն-
ները կը պատմէ գիւղական միջավայրի
մէջ, ողողուած հայրենասէրի քնարերգա-
կան զեղմունքով: Պռօշեան ազգագրագէտ,
որ իր դժուարամարտ նիւթը կը փաթա-
թէ վիպական գեղահատներու մէջ, որ
պէսզի հեշտութեամբ կ'լլեցնէ ընթեր-

(1) Շար. 22րդ թիւէն:

ցաղին: Աղայիանց պատմագիր՝ իրապաշտարտաբնութիւնով: Շահագիղեան իր Լեւոնի բերանով Նազարեանցի գաղափարները կը քարոզէ, իսկ Քաթֆի իր բարձր գեղարուեստական տաղանդը կը զոհաբերէ իր ազատագրական քարոզներուն:

Ատոնցմէ ոչ մէկուն համար վեպը գուրգուրանքի առարկայ չէր: Անոնք բոլորն ալ ունէին որ և է ուրիշ բան մը որ աւելի առաջնակարգ էր, աւելի կարեւոր, քան վեպը: Գեղարուեստական գրականութեան այդ ծիւղը անոնց համար խորթ դաւակ մը եղած է, զոր ծառայեցուցած են իրենց պէտքերուն, ամենեւին չհոգալով անոր կեանքը գեղեցկացնելու, անոր փոյլութիւնը քաղցրացնելու մասին: — Ես ամենեւին պաշտպան չեմ «գեղարուեստը գեղարուեստի համար», սկզբունքին: Ընդհակառակն, գեղարուեստը որ և է նպատակի, նոյնիսկ ձգտումի ծառայեցնելը ևս կը համարիմ՝ հնարաւոր և նոյն իսկ անխուսափելի: Բայց գեղարուեստի որ և է ծիւղի գիմաեղծումը յանուն որ և է գաղափարի, այդ անխելատրելի է: Եթէ երեւոյթին նայինք պատմականօրէն, մենք պիտի ըսենք, որ ուրիշ կերպ կարելի չէր ըլլալ: Բայց յաւերժացնել այդ կերպ կիրառումը գեղարուեստի, հարկաւոր չէ այդ:

Ուրեմն, հայկական վեպը իր սկզբնաւորութեան օրէն իսկ իր մէջ առեր էր բանաստեղծութեան այդ ծիւղի հետ կապ չունեցող, բոլորովին գիտական միտքեր՝ ազգագրութիւն և պատմագրութիւն, ապա նաև հրապարակախօսութիւն, և այս բոլորը ո՛չ ստեղծագործական գեղարուեստական վերարտադրումով, այլ այդ ծիւղերու գիտական հասկացողութեամբ:

Հարկաւոր էր հայ վեպը մաքրել իրենն ոչ հարազատ՝ գիտական և հրապարակախօսական տարրերէն. հարկաւոր էր ստեղծագործող արուեստին տալ իրեն վայել տեղը. և այդ գործը վերապահուած էր Շիրվանզատէին: Ի հարկէ կան անոր ժամանակակից ուրիշ վիպասաններ ալ, որոնք ժամանակի հասունացած պահանջ-

ներուն բաւարարութիւն տուին նոյն ուղղութեամբ. բայց ատոնցմէ ոչ մէկը անոր նման տեւողական և հետեւողական կերպով չզբաղեցաւ վեպի մաքրագործութեամբ: Անոր ոչ մի գրուածքին մէջ, «Հրդեհ նաւագործարանում» փոքրիկ պատմուածքէն մինչև նորագոյն գործերը, չենք պատահիր դէպքի մը որ տեղ նա վեպի միջոցով մեզ տայ իր պատմական, հնագիտական կամ տեղագրական ուսումնասիրութիւնները, կամ à la Քաթֆի ընէ իր քարոզութիւնները. ոչ ալ քնարերգութիւնը եկաւ անոր վեպերուն մէջ, գեղարուեստական գրականութեան այդ ծիւղի մէջ աններդաշնակութիւն մտցնելու: Ամէն տեղ երեւակայութեան միջոցով ստեղծագործական կառուցուածքն է, որ և է գաղափարի, այրող հարցի շուրջը համախմբուած թիքերն սև պատկերներն են, որոնք բոլորը միասին ամբողջութիւն մը կազմելով մեզի կուտան գեղարուեստական դործ մը, ստեղծագործութիւն մը, բանաստեղծութիւն:

Ծիակ բացառութիւնը կը կազմէ «Արսէն Գիմաքսեանը», այս վեպին մէջ Շիրվանզատէ խիստ շատ կապուեցաւ փաստականին, և այդ պատճառով ալ մարդ կը մնայ տարակուսանքի մէջ, թէ արդեօք ո՞րն է այստեղ հեղինակի համար առաջնակարգ խնդիրը. արդեօք ան կ'ուզէ՞ մեղի տալ ժամանակի ազատական մտածողութեան ներկայացուցիչ մը, շիջր մը այդ կուսակցութեան, և անոր միջոցով ցոյց տալ այդ գաղափարներու կիրառման հետեւանքները մեր կեանքին մէջ. այսինքն ան ուզած է մեզ տալ Շահագիղի Լեւոնը, խօսքէն գործի անցած, թէ՛ անոր առաջնակարգ խնդիրն է եղած պատկերացնել հոգեբանութիւնը այլանդակ արտաբնութիւն հասարակական գործիչի մը, այսինքն իրեն առաջադրած է հոգեբանական հարց մը: Եթէ առաջինն էր անոր նպատակը, ուրեմն ինչո՞ւ համար է արդեօք է ազատական շիջրի այլանդակ արտաբնութիւն. իսկ եթէ հոգեբանականն է, ինչ պէտք կար այդպիսի փորձի մը համար իր հերոսը դուրս բերել ժամանակի պակաստարած

ուած գաղափարներու ներկայացուցիչ, և ամենամեծ բանակի մը գաղափարական ղեկավարը: Իսկ այս ձախողակի արդիւնքը ստացուած է միայն այն պատճառով, որ Շիրվանդատէ իր այս հերոսը արտանկարած է իրական մօտեցէ մը, այն ալ չափազանց հարազատութեամբ, անոր հոգեկան կերպարանքին հետ ընդօրինակելով նաև անոր ֆիզիքական պատկերը: Գերմանացի յայտնի վիպասան Շրիլհակէն իր մէկ ծանօթ գործին հերոս՝ Լէօի համար իբրեւ նախնադար ունեցած է ֆէրտի-նանտ Լասալը. բայց նա իր Լէօն հրէական ընտանիքէ չի ծագեցներ, թէև այդ կ'ըլլար աւելի հարազատ պատկեր և համապատասխան իր նախնադարի ընտանեկան վիճակին: Այդպէս չ'աշուելով նա կ'այլանդակէր իր գործը. հերոսի հրէական ծագումը գերմանական ընթերցողի աչքին կը նսեմացնէր անոր գաղափարական հմայքը: Բանուորական շարժման ղեկավարը՝ Շրիլհակէնի վէպին մէջ կը կորցնէր խոշոր շանսեր՝ ընթերցողի աննախապաշար վերաբերմունքի նկատմամբ, ինչպէս Շիրվանդատէի Գիմաքսեանը կը կորցնէ: — Այո՛, «Արսէն Գիմաքսեանը», խոշոր գործ մ'ըլլալու շատ հիմքեր ունեցող այդ վէպը, զո՛հ է աննեւրելի սխալի մը:

Ուրեմն, Շիրվանդատէի պատմական գերը մեր գրականութեան մէջ, այն է որ նա գեղարուեստական գրականութեան մէկ ճիւղը՝ վէպը՝ մաքրեց անհարազատ տարրերէ, և զայն դարձուց արդիւնք միայն ստեղծագործող աշխատանքի, զայն դարձուց արուեստ: Նա հանդիսացաւ մեր մէջ վիպասան. այդ հասկացողութեան եւրոպական մտքով:

Գրական ուղղութեան տեսակէտէն եթէ նայինք Շիրվանդատէի նախորդներուն վրայ, պիտի ըսենք, որ Աբովեանի երկին մէջ կը գերակշռէ բունդիզմը, ինչպէս նաև Բաքիի շատ գործերուն մէջ: Այդ բանը կարելի է պնդել որոշ չափով նաև Պոռջեանի մասին: Ըահադիզեան հայկական Պայրընիզմի միակ ներկայացուցիչը եղաւ, ուղղութիւն մը որ Արեւմտ-

եան Եւրոպայի և Ռուսաստանի մէջ անոր «Լեւոնի վիշտը» գործի երեւան գալէն աւելի քան քառորդ դար առաջ արդէն գաղափարած էր տիրապետող հանդիսանալէ: Աղայեան ղեկավար էր իր վէպ-կենսագրութեան մէջ, բայց աւելի եւս ղեկավար էր Բաքիի՝ իր բազմաթիւ գործերուն մէջ: Շիրվանդատէ այս կողմէն ալ չեղաւ հին ուղղութիւններու ներկայացուցիչ, և իր վէպերը չդարձուց խառնուրդ բունդիզմի և ղեկավարի, նա սկիզբէն սիրեց իրապաշտ ուղղութիւնը և առոր մէջ յարատեւեց մինչև վերջը: Նոյնիսկ նորագոյն շրջանի մէջ նա չազդուեցաւ ժամանակակից սեկսոյիզմէն, ինչպէս անոր հետ միաժամանակ պայքարէր իրմէն ուրիշ հեղինակներ: Այստեղ ալ նա հանդիսացաւ համոզուած և անյողդող ընթերցող՝ գիտակցաբար ընտրած իր ծանապարհափ: Անխառնուրդ ղեկավար հայ վէպի մէջ ինչպէս Շիրվանդատէի գործերած զաւակն է:

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ է Շիրվանդատէն դէպի նախորդները՝ իբրև հեղինակ:

Մ. Յ.

(Մնացեալը յաջորդումով.)

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԻՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

ԱՅ.

Աշխատեցէք ցորճափ լոյսը ձեզի հետ ունիք:(2)

Մեր պատմութիւնը տեղի կ'ունենայ Հոռոմի Տրայիանոս կայսեր իշխանութեան օրով. Քրիստոսէ ետքը առաջին դարուն վերջերը: Առաքեալները կ'ապրէին սուկալին: Այն ժամանակուան Քրիստոնեաները խղճմտօրէն կը հետեւէին Վարդա-

(1) Եւր. տեւ Թ/ւ 22:

(2) Փոփոխեալ հաստատ մը «Բաղեցէք ցորճափ լոյսը ձեզի հետ ունիք» խօսքին: (Յովհ. Ժ. 9, 35):

պետին դրած օրէնքներուն, ինչպէս Գործք Առաքելոցի հեղինակը կը պատմէ մեզի եւ հաւատացեալներու թագնորքիւնը մեկ սիրտ մեկ հոգի ունէր միայն. ոչ ոք կ'ըսէր թէ ունեցածն իրեն կը պատկանի. այլ ամեն բան հաւատակաց. եր անոնց մէջ: Եւ առաքեալները բարձրաձայն կը վկայէին Տէր Յիսուսի յարութիւնը: Ձեռնպահոքիւն չկար բնաւ. անոնք որ հողեր, տունք եւ ո եւ եւ ստացուածք ունէին, կը վաճառէին եւ զինք կը բերէին կը յանձնէին առաքեալներուն, որ իւրաքանչիւրին պէտքին համաձայն կը բաժնէին:

Այդ ժամանակները Կիլիկիոյ նահանգին Տարսոն քաղաքին մէջ կ'ապրէր Ժիւզէնալ անունով սուրիացի փարթաւ վաճառական մը, որ թանկագին քարերու առուտորով կը զբաղէր: Մոռնալով ընկերային ամենէն ազգատ եւ ստորին դասակարգին կը պատկանէր. բայց իր աշխատութեան եւ ճարպիկութեան շնորհիւ յաջողած էր մեծագումար հարստութիւն դիզել, եւ վասակիլ իր քաղաքակիցներուն յարգանքը:

Թէեւ մեծահմուտ մէկն ըլլալու յաւակնութիւնը չունէր, բայց իր բազմաթիւ ճամբորդութեանց միջոցին շատ բան տեսած եւ իւրացուցած էր Այս պատճառով իր հայրենակիցները բարձր յարգանք մ'ունէին անոր վրայ, իր իմացականութեան, ողջմտութեան, եւ արդարադատութեան համար:

Հռոմէական հեթանոսութեան կրօնքը կը դաւանէր, որ Հռոմի բոլոր երեւելիներուն կրօնքն էր, եւ որուն ձեւակերպութիւններն եւ արարողութիւնները խստիւ գործադրուած էին Օգոստոս կայսեր օրով, եւ աւելի խստիւ կը պահպանուէին Տրայանոսի իշխանութեան տակ:

Կիլիկիոյ նահանգը շատ հեռու էր Հռոմէն, բայց հռոմայեցի կուսակալի մը վարչութեան տակ զոնտելով, Հռոմի մէջ երեւցած յառաջդիմական ձգտումներն եւ յետադիմական շարժումները կը զգացուէին զօրեղապէս այնտեղ, որովհետեւ կուսակալները կը ջանային նմանիլ իրենց կայսերուն:

Ժիւզէնալ կը յիշէր այն պատմութիւնները զորս իմացած էր իր երիտասարդութեանը միջոցին, ներոնի կեանքին եւ մահուան վրայ: Դիտած էր, եւ իր յիշողութեանը մէջ լաւ քանդակուած էր թէ իւրաքանչիւր կայսր, յաջորդաբար, զոհ եղած էր կանխահաս մահուան մը:

Իբրեւ արթնամիտ զիտող մը, լաւ ըմբռնած էր թէ նուիրական ոչինչ կար, ո՛չ հոռոմէական կրօնքին, եւ ոչ ալ կայսերական իշխանութեան մէջ, երկուքն ալ մարդկային ձեռակերտներ ըլլալով: Այդ միւսնոյն արթնամտութիւնը ցուցուցած էր իրեն նոյնպէս թէ անօգուտ էին կայսերական իշխանութեան դէմ ընդդէմու ճիգերը, եւ թէ խաղաղ եւ երջանիկ կեանք մը վարելու համար անհրաժեշտ էր համակերպիլ օրուան արող կարգ ու սարքին:

Այսուհանդերձ իր շուրջը նշմարած մոլորանքներն եւ խայտառակութիւնները կը վրդովէին զինքը, մասնաւորապէս Հռոմի մէջ, ուր յաճախ կ'երթար իր գործերուն պահանջումով:

Այն տաւն տարակոյսը կը պաշարէր իր միտքը. բայց չուտով իր բնական հանդարտութիւնը կը դանդաղէր, ինքնիրեն ըսելով թէ իր միտքն այնքան զարգացած չէ այս խնդիրներն իրենց ամէն կողմէնով լուսագոյն կերպով ըմբռնելու համար, եւ չի կրնար խորհրդածել այնքան ճշգրիտ կերպով՝ զիտողութեանը առարկայ եղած իրողութիւններն արդար եւ ճիշտ եղբակացութիւններ հանելու համար:

Ամռանացած էր ու չորս զաւակ ունեցած. բայց երեքը պզտիկ հասակի մէջ մեռած էին, եւ մէկ զաւակ մը միայն մնացած էր, Յուլիոս անունով:

Այս միակ զաւակն իր ջերմ սիրոյն ու խնամքին առարկայ եղած էր: Կը ջանար այնպիսի զարգացում մը եւ կրթութիւն մը տալ անոր, որ ապագային անիկա իր կեանքի ընթացքին մէջ չենթարկուէր այն սոսկալի առգնապնդուն որոնց մէջէն անցած էր ինքը:

Երբ Յուլիոս 15 տարեկան եղաւ, հայրը զինքը յանձնեց փիլիսոփայի մը

խնամաց, որ եկած նոյն քաղաքը հաս-
տատուած էր, երիտասարդներու գաղութա-
կութիւնն ստանձնելու նպատակով: Հե-
տեւապէս իր զաւակը, ինչպէս նաեւ ա-
նոր Պամիրիիտս անուն մէկ ընկերը, այդ
ուսուցչին յանձնեց, Պամիրիիտս զաւակն
էր իր ազատագրուած գերիներէն մէկուն
որ քանի մը տարի առաջ մեռած էր: Եր-
կու աղաքն ալ միեւնոյն տարիքն ունէին.
գեղեցիկ, կորովի, եւ ինչ որ աւելի կա-
րուար է՝ մտերիմ բարեկամներ էին: Եր-
կուքն ալ լրջօրէն ուսման տուն ինք-
զինքնին, եւ որոգ յառաջդիմութիւններ
ըրին: Յուլիոս մասնաւոր ընդունակու-
թիւն կը ցուցնէր գրականութեան եւ
չափագիտութեան, մինչ Պամիրիիտս ճա-
շակը դէպի փիլիսոփայական ուսումը կը
հակէր:

Ուսման համար որոշուած պայմանա-
ժամը լրանալէն տարի մը առաջ, Պամիրի-
իտս օր մը դպրոց գալով իմացուց իր ու-
սուցչին, թէ իր մայրը որ այրի էր, նոյն
քաղաքէն պիտի մեկնէր, եւ մէկ քանի
բարեկամներու ընկերակցութեամբ պիտի
երթար բնակէր մերձակայ գիւղաքաղաք մը,
եւ թէ ինք ալ պարտական էր մօրը ըն-
կերանալ, ինչ որ գծաբազարար կը հար-
կալէր զինքը զպրօքը լքելու, եւ կիսա-
ւարտ թողլու իր ուսմունքը:

Ուսուցիչը շատ կը ցաւէր իրեն այն-
քան պատուարեր աշակերտ մը կորսնցնե-
լուն համար: Ժիւլէնալ եւս շատ կը
ցաւէր որ զաւակը կը կորսնցնէ իր լա-
ւագոյն բարեկամը: Բայց ամէնէն աւելի
Յուլիոս վիշտ կ'իմանար: Շատ թախան-
ձեցին Պամիրիիտս որ տարի մըն ալ չա-
րունակէ իր ուսմունքը, բայց անկա-
խող մնաց ամէն աղաչանքի: Ջերմապէս
չնորհակալ ըլլալ նոյնք իր բարեկամներուն՝
իրեն ցոյց տրուած համակրութեան հա-
մար, մնաք բարով ըստ ու մեկնեցաւ:

Երկու տարի անցաւ: Յուլիոս աւար-
ակց իր ուսման շրջանը, առանց իր բա-
րեկամը վերստին տեսնելու: Օրին մէկը
անսովորակ կերպով փողոցին մէջ հանդի-
պեցաւ անոր: Առաւ իր հօրը տունը տու-
րաւ գոյն, ուր հարցումներ ուղղեց անոր՝

իր բնակած քաղաքին վրայ, ինչպէս նաեւ
իր մեկնումէն ի վեր ըրածներուն վրայ:
Պամիրիիտս պատասխանեց թէ միշտ մի-
եւնոյն քաղաքը կը բնակի:

— Մինակ չենք ապրիր, տեղացոց,
այլ բաղմաթիւ բարեկամներու ընկերակ-
ցութեամբ, եւ ամէն րոն հասարակաց է
մեր մէջ:

— Ինչ ըսել է հասարակաց, հարցոց
Յուլիոս:

— Ատիկա կը նշանակէ թէ ոչ ոք իր
անձնական սեփականութիւնը կը նկատէ
ո եւ է բան մը:

— Կրնամ հարցնել թէ ինչո՞ւ այդ-
պէս է:

— Որովհետեւ մենք քրիստոնեայ
ենք, պատասխանեց Պամիրիիտս:

— Կարելի՞ Բան է այդ, ըսաւ Յու-
լիոս:

Պէտք է ըսել որ այն ատենները քրիս-
տոնեայ ըլլալ կը նշանակէր ճիշտ ինչ որ
է այսօր դաւաճանը: Ո եւ է քրիստոնեա-
կան գաւառութեան մը պատկանելու
կասկածին տակ դանդաղ մը անմիջապէս
կը ձերբակալուէր, կը բանտարկուէր, կը
զատուէր, եւ եթէ չհեռանար իր նոր
կրօնքէն, մահուան պատիժին կ'ենթար-
կուէր: Յուլիոս գիտէր այս ամէնը: Այս
պատճառով սարսափի մասնուեցաւ, երբ
իմացաւ թէ իր բարեկամը՝ նոր կրօնքն
ընդունած է. իմացած էր կարգ մը խրժ-
դժական իրողութիւններու պատմութիւնը,
որոնք քրիստոնեաներու կը վերադրուէին:

— Իմացած եմ որ, ըսաւ, քրիստոնեա-
ները պզտիկ տղաքները կը սպաննեն,
զանոնք ուտելու համար: Իրա՞ւ, արդեօք
դ՞ու ալ կը մասնակցիս այդ տեսակ
բարբարոսութիւններու:

— Դուն անձամբ եկուր գտա՛, պա-
տասխանեց Պամիրիիտս, բնաւ արտասո-
վոր բան մը չենք բռնը, շատ պարզօրէն
կ'ապրինք ու չարէն կը խռատախնդ:

— Բայց ինչպէս կարելի է ապրիլ եւ
կեանքի մէջ յառաջանալ առանց ստույ-
ռածքի իրրեւ քու սեփականութիւնդ
նկատելու:

— Մենք փոխադարձաբար իրարու կ'օգնենք. եւ եթէ մենք մեր եղբայրներուն համար կ'աշխատինք, անոնք ալ իրենց կարգին մեզի հետ կը բաժնեն իրենց աշխատութեան արդիւնքը:

— Բայց ի՞նչ կ'ընէք եթէ ձեր եղբայրներն ընդունին ձեր ծառայութիւնները՝ առանց փոխարինելու, ըսաւ Յուլիոս պնդելով:

— Այգպիսի մարդ չունինք մէջերինս, պատասխանեց Պամիրիլիոս: Այդ նկարագրին տէր մարդիկը պերճանքի ճաշակն ունին, եւ մեր համայնքին մէջ չէ որ կուգան իրենց բազմաթիւ գոհացումին համար: Մենք շատ պարզօրէն կ'ապրինք, առանց պերճանքի:

— Անշուշտ. եւ սակայն կրնան ծոյլեր գտնուիլ. որոնք առանց ո եւ է աշխատութեան կեանք վարել կը փափաքին:

— Ճիշտ է թէ այդ տեսակ մարդեր կան: Արդ, մենք զանոնք սիրով կ'ընդունինք եւ կը հիւրասիրենք: Վերջերս այդ կարգի մարդ մ'ընդունեցինք, փախտաւ կան դերի մը: Նախ շատ ծոյլ երևցաւ, բայց յետոյ աստիճանաբար ինքզինքն ուղղեց: Հիմա մեր համայնքին ամէնէն դործունեայ եւ արժանիքի տէր անդամներէն մէկն է:

— Բայց եթէ ինքզինքը չուղղէ:

— Ստուգիւ այդ տեսակներ ալ կան: Սիրիլ, մեր մեծը, կ'ըսէ թէ մենք մասնաւորապէս այգպիսիները պէտք է նկատենք մեր ամենասիրելի եղբայրները, եւ ընաւ առիթը ձեռքէ չփախցնենք համակրութիւն ցուցնելու անոնց:

— Բայց կարելի՞ է սիրել ս փկաները:

— Մարդ մեծ անիրաւութիւն կ'ընէ իր նմանները չսիրելով:

ԼԷՈՆ ԹՈՒՍԹՈՅ

(Շարունակելի)



ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՂՆԵՐԷ

Կ. Ս. Ս. Ն. Ռ. Ը

Կեանքի շրջանը բոլորելու համար միակ օգտակար ճամբան մեծ պարտականութիւններէ եւ լուրջ սէրերէ կը բաղկանայ: Եւ նոյն իսկ այդ սէրերը կ'անհետին կամ դո՛ւնէ իրենց առարկաները մահկանացու են. պարտականութիւնն անփոփոխելի է:

Պէտք է այն մտօք առաջնորդուիլ որ մարդիկ մարմնոյ համար չէ որ կ'ապրին, այլ վրան գիտաւնոյ մարմնոյ չէ կարելի տպել: Եթէ մենք շատ կապուինք անոր, աւասիկ զմեզ պիտի գտնենք ահաւորով ապաստանար, հոգերով ծանրաբեռնուած եւ հաղար անախորժութեանց մասնուած: Կեցեցիկ բարոյականը շատ քիչ բան է, միայն ֆիզիքականով ապրող մարդուն աչքին: Մարմնոյն տա՛նք իր պահանջած բոլոր խնամքները, բայց գիտանա՛ք միանգամայն բոցերու մէջ նետել զայն, երբ հրամային բանավարութիւնը կամ պատիւը կամ պարտականութիւնը:

Ապրելու օգտակարութիւնը միջոցին մէջ չէ, այլ կիրաււան մէջ. այսպէս, նա որ քիչ ապրեցաւ, շատ ապրեցաւ:

Թէպէտ եւ մահկանացու ենք բայց պէտք չէ որ մահացու բաներու ենթարկենք զմեզ, այլ որքան որ կարենանք, անմահութեան բարձրացնենք զմեզ, եւ ինչ լաւագոյն բան որ կայ ի մեզ, անոր համաձայն ապրինք:

Բարբերու կասարեւադործումը կը կայանայ անցունելու մէջ ամէն մէկ օրը, որպէս թէ այն՝ վերջին օրն եղած ըլլար, առանց յուզման, առանց մեղկութեան, առանց կեղծիքի:

Դուք կեանքէն զո՛հ պիտի մնաք, եթէ զայն լաւ կերպով զործածէք:

Սիրցա՛ւր զբեղ կեանքիդ օրինակով:

Հաւագոյն կեանքերն անոնք են, որ հանրային եւ մտքկային ախարը ընալու եղանակով կարգի կը դրուին:

«* Ինչպէս որ տաքը չէ որ կոչիկին ձեռ կուտայ, այլ կոչիկին է որ ոտքին ձեռք կ'առնէ, այսպէս ալ մեր կեանքի ընդգրկած զանազան ահապահերը չեն, այլ մեր հոգիներու տարբեր մարդու թիւներն են որ կեանքը առաւել կամ նուազ երջանիկ կը կայացնեն»:

«* Գործերու շատութիւնն եւ քիչութիւնը չեն որք մարդոց կեանքը անհանգիստ կամ խաղաղ կ'ընեն, այլ զիրենք զրազեցնող բաներու առաւել կամ նուազ պարկեշտութիւնն է պատճառը»:

«* Կատարուած պարտականութեան խղճմանստիւն մէջ առջեւ ընդ մեր կայ, որ մեզ կը զգացնէ թէ ինչ որ ալ ըլլայ կեանքը լաւ բան մ'է»:

«* Այս աշխարհի մէջ բնաւ լաւ բան մը չ'ըմ տեսներ որ իրեն ընդ չ'ունենայ, ինչպէս որ պինի չունինք առանց մրուրի Ուրիմն պէտք է կշռադատել. լաւ է որ մեր պարտէզին մէջ փուշեր ալ ունենանք՝ վարդեր ունենալու համար, կամ թէ բնաւ վարդ չ'ունենանք բնաւ փուշեր ալ չ'ունենալու համար»:

«* Ով որ իր ետեւէն ազնիւ կեանքի մը յիշատակը թողուց, յաջորդ սերունդին անապառ բարեաց աղբիւր մը թողուց»:

«* Կեանքի մէջ փնտռելիք բանը նախ պարկեշտն է, յետոյ օգտակարը որ իրեն կը յաջորդէ վասն զի իրարմէ անբաժան են»:

«* Ամէն պայմաններէ անցայ, եւ կեանքի վրայ անվրէպ խորհրդածութենէ մը յետոյ երկու բան գտայ, որք կրնան զայն երջանիկ ընել, այսինքն, փափաքներու չափաւորութիւնն եւ հարստութեան լաւ գործածութիւնը»:

«* Մարդոց ամենէն աւելի սովորած բանն է ունենալ բայց նուազ հոգ տանիլ, այդ ալ իրենց կեանքն է»:

«* Մէկ բան միայն կարող է տալ մարդկային կեանքին իր ճշմարիտ նշանակութիւնն եւ իր ճշմարիտ արժանապատւութիւնը, այն է բարիքի սէրը, եւ այս սէրը կիրառմամբ եւեթ ձեռք կը ձգուի»:

«* Մարդիկ պէտք չէ որ իրենց կա-

յանը թողուն հեռանան առանց հրամանատարին թոյլտուութեան, մարդու կայանը իր կեանքն է»:

«* Ինքնապաշտ մարդկային ցեղին մէկ աւագակն է, զայն թողելէ առաջ հատո՛ւ նմա ինչ որ ան տուաւ քեզ. «բայց բան մը չ'ունիմ տալու, անողուտ եմ աշխարհի», կ'ըսես, սակայն դու կ'անդիտանաս որ երկրի վրայ դուն չես կրնար քայլ մը առնել, առանց հոն գտնելու սր եւ է կատարելիք պարտականութիւն. Ամեն անգամ երբ փորձուիս կեանքէ հրաժարելու, ըսէ՛ դու քեզ. «Միտնելէ առաջ լաւ գործ մը եւս կատարելի» Զետոյ գնա՛ աղքատ մը դռնի օդնելու, դժբախտ մը՝ սփոխելու, ճնշուած մը՝ պաշտպանելու համար»:

«* Մահը մէկ անգամ միայն կուգայ, բայց կեանքի ամէն վայրկեաններու մէջ ինքզինքն զգացնել կուտայ. աւելի դժուր դակ է անկից երկնչիլ քան թէ զայն կրել»:

Բաղնից ԽԱՉԻՍԱՐ

ՀԱՅ ՀՈՒՍԷԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԹԻՐԱՅԵԱՆԻ ԴԷՄ

Ինքնագիտակցութեան հոյակապ շարժում մ'ըրաւ Հայ-հոսմեական ժողովուրդը անցեալ կիրակի օր: Թէրզեանի համաբաւար «հովուական թուղթը», որ պարզ արհամարհանք մ'էր ժողովուրդին եւ իր ներկայացուցիչներուն, կապտում մը ժողովրդային իրաւունքներու, եւ փորձ մը ժողովուրդը կաշկանդելու համակարգ կղերին՝ ձեռքը, որոշուի էր անցեալ կիրակի կարգալ Հայ-հոսմեականաց եկեղեցիներու բեմերէն, Բայց նայն որ մեր Հայ-հոսմեական եղբայրները ցուցուցին թէ իրենք կորսնցուցած չեն ինքնագիտակցութիւնը, եւ գիտեն ծառանալ ժողովրդային կամքն անաւտելու, լաւ եւս ժողովուրդը կամքէ եւ գիտակցութիւնէ զուրկ զանդուած մը նըկատելու ձգտումին զէմ, որ առաւելապէս առանձնայատկութիւնն եղած է անդրա-

լեռնական կղերին, եւ որ Միջին Դարերէն ի վեր ըմբոստութեան, բողոքի հզօր շարժումի մը առիթ տուած է իրեն գէտ : Նոյն բանը եղաւ այս անգամ ալ : Այն պահուն որ «Մեծաւորները կոնգակը կարգալու կը պատրաստուէին, ժողովուրդը «չպիտի կարդացուի» պօռալով արգիւնց ընթերցումը : Փանուկեցան եկեղեցականներ որ հակառակիլ ուզեցին, բայց ժողովուրդը դժուար խից կոնգակն անոնց ձեռքէն թէրգեանի արբանեակներէ ու մանք կարգ մը միամիտներ համուած էին նոյն կոնգակին ընթերցումը պահանջելու Բերայի Ս. Յովհանն Ոսկերերան եւ Ս. Աստուածածին եկեղեցիներուն մէջ, եւ Ոսկերերանի մէջ Ռաքոսեան Վ. արդէն սկսած էր կանգակը կարգալ : Բայց ընդգիտութիւնը աւելի բուռն եղաւ, ոչ միայն խափանուեցաւ սկսուած ընթերցումը, այլ եւ պահ մը ախտներ իսկ բարձրացան, կիներ նուաղեցան, եւ մեծաւորն հազիւ իր օձիքն ազատեց ժողովուրդէն, որ եկեղեցւոյ կից յարկին մէջ կոնգակը խից անոր ձեռքէն, եւ ծափահարութեանց եւ թէրգեանի հասցէին պարսաւանքներու մէջ այլեւ : Օրթալիւղի մեծաւորը, իրեն ներկայացող պատգամաւորութեան փափաքին համաձայն, չկարգաց կոնգակը, եկեղեցին կռիւի ասպարէզ չգարձեցելու համար : Միայն Գառը գիւղի մէջ կարիւրի եղած է խափանել ժողովրդային ընդդիմութիւնը : . . . ոստիկանական սւթով, եւ կարգայութիւն չստ կանուխ :

Յաւով դիտուելի է որ Վիեննայի «գիւնական» միաբանները ինքզինքնուն թէրգեանի ի նպաստ «Բրօքականտիստ»ի դեր տուելու են, այն թէրգեանին որ ժողովուրդը բռնապետական լուծի մը ենթարկել, անոր իրաւունքները ոտքի տակ առնել չի խղճեր :

* * * Կարնոյ Յառաջ թերթը կը պատմէ թէ նոյն քաղաքին եկեղեցիին մէջ Մայիս 20ին մինչ Յովսէփ Վ. Արրահաման կը կարդար թէրգեանի կոնգակը, ու նոր թշնամայից բովանդակութիւնն այնքան բուռն գեղեցութիւն յառաջ կը բերէ ժողովուրդին մէջ, որ երիտասարդներու

խ. հ. մը բեւեղ կ'ելլէ, եւ իրենցմէ մէկը կը խլէ կոնգակը վարդապետին ձեռքէն, եւ կ'ազդէ այնքան հակաժողովրդային գրութեան մը ընթերցումը : Դաւառը Պոլիսին չէ ապստամբութիւնն ինքնագիտակցութեան այս ու չսգրաւ ցոյցին մէջ :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Հայ եկեղեցւոյ ուղղափառութիւնը. — Աւարտեալ իր Մայիսի թիւով խօսելով Բուսնի մէջ Հայ եկեղեցի եւ Հայ քահանայ չգտնուած աղերքը Յոյն քահանաներու կողմէ Հայ զինուորներն հաղորդելու եւ հոգեւոր արարողութիւններ կատարելու նկատմամբ եղած առաջարկին վրայ, որուն բաղադրական պատասխան արուած էր, սա աղերք կ'ուրեցնէ. — «Այս պատասխանից յետոյ աւելորդ էր մեր փոխանորդի հարցնելը թէ Յոյն եկեղեցին ինչպէս է ընդունում մեր եկեղեցին, եւ Յոյն պատրիարքի ասելը թէ ուղղափառ կ'ընդունի : Մեր եկեղեցւոյ ուղղափառութիւնը մենք չպէտք է մուրանք ուրիշ եկեղեցիներին, եւ այդ մուրացածոյ շնորհը չպէտք է հիմք ծառայեցնենք, ուրիշ եկեղեցիների հետ հաղորդակցութիւն պահպանելու համար : Մեր եկեղեցին իր հաղարարութեամբ քրիստոսի բնականական եկեղեցւոյ մի կարեւոր մասն է, եւ իբրեւ ինքնուրոյն եկեղեցի իր իսկական շահերն ու քաղաքականութիւնը պէտք է ունենայ, եւ այդ շահ ու անհրաժեշտ պէտք է յարաբերութիւն պահէ ուրիշ եկեղեցիների հետ Տաճկաստանում, միայն կառավարութեան հետ յարաբերութեան խնդրներում» :

Հայ-հռոմեականները Ռուսիոյ մէջ Մինչ Հայ հոռմեականները թոքի մէջ կենդանութեան եւ ինքնագիտակցութեան նշաններ ցոյց կուտան, Ռուսիոյ մէջ չատտիտուր գոյնիւրով կը նկատուի Հայ-Կաթօլիկ եկեղեցւոյ դրօշակները : Սուրհանդակ թերթին մէջ Պ. Ասրպիտ ցաւելով կը գրէ որ թիֆլիզի Հայ-կաթօլիկ եկեղեց-

ցին, որ Հայ-կաթոլիկ տիկնոջ մը նուիրած հոգին վրայ Հայերու գրամով շինուած է, այսօր Լատին կղերին ձեռքն անցած է, Դիրաւորի Եպիսկոպոսին հայատեաց քաղաքաւանութեան շնորհիւ, եւ Լատին կղերը համայն Ռուսոյ Հայ-հռմէակներու հերկայացուցչին տեղ չի տար Եկեղեցւոյ մէջ: Այս վերջինը, անձար մուսցած, փոխանակ տէր կանգնելու Եկեղեցւոյն եւ Սեմինարիային, ստիպուել է հանգանակութիւն կատարել, նոր Եկեղեցի եւ Սեմինարիա կոտուցանելու համար... որպէս զի 50.60 տարի ետքը Լատին կղերը դարձեալ դայ եւ յափշտակէ: Պապերու տուած շրջաբերականներու եւ կանոններու համաձայն, Լատին կղերը իրաւունք չունի հայածէս Եկեղեցին Լատինացիներու Բայոյ Դիրաւորի Եպիսկոպոսին քաջալերութեամբ շատ բան կատարուած է Հռոմայ Պապին կամքին ու կանոններուն հակառակ: (1) Սնդիրն այն տեղ հասած է որ Թիֆլիզի եւ Ախլցխայի մէջ շատ մը զբոսորդներն Հայ-կաթոլիկներ, մկրտուած Հայ աւազանի մէջ, այսօր Լատինածէս քահանաներու միջոցաւ այլասերած են. եւ ուրանալով իրենց ծագումն ու լեզուն, միացած են օտարազգի Կաթոլիկներու: Պ. Ատրպետ, գովելով հանգուցեալ արաբասեանի եւ Շահգոյեանի եռանդը՝ Հայ կղերը զերծ պահելու Լատին կղերի յափշտակութենէն, բազմանք կը յայտնէ որ արդի սոսաքեղական քարոզիչն ալ անոնց շաղին հետեւի, Հայ աւանդը սրբութեամբ պահպանելու, Հայ Կաթոլիկ Եկեղց. հաստատութիւնները ազատելու Լատին կղերի եւ Լատինայացածներու, այլասերածներու յափշտակութենէն:

Մարդ սրտի մեղմում մը կ'ունենայ, մտածելով որ Թուրքիոյ Հայ-հռմէակներու այժմու Պատրիարքն ալ, որ այն-

քան մեծ յոյսերով կոչուեցաւ այդ Աթոռը, ազգային իրաւանց պաշտպան ժողովուրդին կամքը ջլատելու իր քաղաքականութեամբ կը ձգտի ամբողջ Թրքահայ հռմէական պատուական համայնքն ալ հասցնել Կաթոլիկ Հայ-հռմէականաց տըխուր կայութեան, եւ դուցէ աւելի վատթար վիճակի, ձգելով բոլորովին Լատինականութեան պիկը:

Կարոյիկ Եկեղեցին Բօրթուկայի մէջ. — Բօրթուկայի մէջ հանրապետութեան հաստատութիւնը մեծ հարուած մը եղաւ Կաթոլիկ Եկեղեցւոյն՝ նոյն երկրին մէջ, Նախարարաց խորհուրդը հաւանութիւն յայտնած է Եկեղեցին Պետութիւնէն բաժնելու համար Դատական Նախարար Պ. Կօղայի պատրաստած ծրագրին, որուն համաձայն Կաթոլիկ Կրօնքը այլեւս Պետական կրօնք չէ, եւ կը հաւասարի բոլոր միւս կրօններուն: Ժողովուրդին կը տրուի Կրօնքի լիակատար ազատութիւն: Ամէն մարդ ազատ է մէկ դաւանութիւնէն ուրիշ դաւանութիւն անցնելու Եկեղեցիները կը պահպանուին հաւատացեալներու միջոցով: Օրէնքը հրատարակուելու միջոցին ծխատէր եղող քահանաներուն տարեկան ցմահ օժանդակութիւն կը նշանակուի Պետութիւնէն, իսկ նոր ձեռնադրուող քահանաները պէտք է բաւականաճան հաւատացեալներու տուրքերով: Եկեղեցիի հաշուապահութիւնը կ'ենթարկուի Պետական հսկողութեան, եւ նոր քահանաները կը նշանակուին Պետութեան հաւանութեամբ միայն: Եկեղեցիները կը հրատարակուին Պետութեան սեփականութիւն, եւ ծխականներուն կը թոյլատրուի Եկեղեցիներէն ձրի օգտուիլ: Պետութիւնը այլեւս չընդունելով Կաթոլիկ Կրօնքը, չի հակառակիր քահանաներու ամուսնութեան:

Ուշագրաւ է թէ ինչ որ Եւրոպական երկրի մը մէջ իբրեւ յոռաջգիմական քայլ մը կը հռչակուի, դարեւ ի վեր ընդունուած դրութիւն մ'է Հայ Եկեղեցւոյ մէջ, ուր Եկեղեցականք կ'ապրին ժողովրդեան նուէրներով միայն, ուր Եկեղեցիի հաշիւները ազգային հսկողութեան տակ են, ուր քահանաները կ'ընտրուին ժողովուրդին հաւանութեամբ, ուր Եկեղեցիները ազգային սեփականութիւն են, եւ ձրիապէս տրամադրելի ժողովուրդին համար, եւն, եւն, ՀԱՍԿՊԱՆ

(1) Մենք զօրաւոր պատճառներ ունինք կատակելու մէջ Թիֆլիզեան Պատրիարքի Հռոմ այցէն ի վեր բռնած ազգալիաւ եւ ժողովրդատեաց ընծացքն ալ նոյն իսկ Պիոս Ժ. Պապին կամքին համաձայն չէ, հակառակ որ գիտենք մէ անիկա շատ հեռու է Լիւտն Ժ. Ի լայնամասութիւնն ունենալէ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՎԵՂ. ԿԱՅՈՒՆՆԵՐ ՍԵԼԱՆԻԿԷՆ ՎԵՐԱ-
դարձին առթիւ, որ ժողովրդային
խանդավառ ցոյցերու մէջ տեղի ու-
նեցաւ, ԲՂ. օրը Պատր. փոխանորդ-
Գեր. Տ. Ղեւնդ Մ. Վ. Դուրեան ներկայ
գտնուեցաւ Տօլմա-Պաղչէի պալատը:
Նոյն իրիկունը Ազգ. Պատրիարքարանը
լուսազարդուեցաւ եւ Մայր վարժա-
րանի աշակերտները Գում' Գաբուի
ծովեղբրքը երթալով երգեր երգեցին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ

Ազգային ժողովին անցիալ ուրաթի
նիստին մէջ լուրջ վիճաբանութեան
առարկայ եղաւ Հարստահարութեանց
կնիքը, որու ամէն Հայու վրայ յառաջ
բերած խորունկ վիշտին մասնակից էին
բոլոր երեսփոխանները՝ առանց բացառու-
թեան: Կարգացուելէ ետքը Տ. Հմայեակ
Ս.ի մէկ գիրը, որով կը կրկնէր իր նախ-
կին առաջարկները, Վառմեան էֆ. բա-
նաձեւ մը առաջարկեց, որով «Ազգ. Ժո-
ղովն իր խորունկ ցաւը եւ զայրոյթը կը
յայտնէ վերջին ամիսներուն Հայաստանի
եւ հայաբնակ գաւառներու մէջ տեղի ու-
նեցող սխալներէն ջարդերու, հարստա-
հարութիւններու, խոշտանգումներու, եւ
բռնի իշխման տնտեսութեան: Կ'առա-
ջարկէ Բաղդաթ. ժողովին՝ անյապաղ ու-
սումնասիրել եւ ներկայացնել իրեն, յա-
ռաջիկայ նիստին, այն միջոցները որոնց
կիրառումով կարելի է վերջ դնել թրքու-
հայ ժողովուրդին արդի տապալակից կա-
ցութեան, որպէս զի Ազգ. Ժողովն եւս
կարենայ որոշել եւ ճշգիւ կառավարու-
թեան քով կատարուելիք դիմումներուն
եղանակը» Դաւիթ էֆ. Տ. Մովսէսեան
ուրիշ աւելի մեղմ բանաձեւ մը կարգաց,
նաեւ առաջարկ եղաւ խորհրդարանական
յանձնաժողով մը կազմելու, որ՝ սակայն՝
առարկուեցաւ թէ՛ Վարչութեան կողմէ
ծրագիր մը բերուելէն ետքը կրնայ կազ-
մուիլ: Թեր ու գէժ կարծիքներ յայտնուելէ,
եւ արտակարգ գէտքերու հանդէպ արտա-

կարգ միջոցներու դիմումելու պէտք ցու-
ցուելէ ետքը, խնդիրը քաւի գրուելով,
րնդունուեցաւ Վառմեան բանաձեւը, ջրն-
ջուելով զայրոյթ բառը:

Յետոյ ժողովը ձեռք տուաւ եկեղյ. ե-
րեսփոխանաց ընտրութեան վրայ երացման
խնդիրը. այս անգամ եւս ծանրակշիռ յայ-
տարարութիւններ եղան Երէցեան Ս.ի
անձին գէժ, եւ հակակիր արտայայտու-
թիւն մը՝ ընդհ. եկեղեցականութեան հառ-
ցէին: Քննադատուեցաւ Համագումարն եւ
իր ընտրութիւնը, քննադատուեցաւ Նա-
խաձեռնութեան Դիւանը, եւ էսմէրեան
էֆ. իօսեցաւ՝ Երէցեան Ս.ի առիթով՝
անտուկի մը վրայ «որ բնաւ տարբերու-
թիւն չունէր Երջարդէն պատերազմական
ատեան փոխադրուած անտուկներէն»: Բուռն
ազմուկ յարոյց այս ծանրակշիռ յայտա-
բարութիւնը, որուն համամիտներ եւ հա-
կառակախօսներ պակաս չեղան: Ուշադ-
րաւ էր սակայն Վառմեան էֆ. յայտա-
բարութիւնը՝ թէ «Ժողովն այնքան լար-
ւած է որոշ մարդոց տրամադրութիւննե-
րէն որ բոլորովին կրքաւած է: Այնքան
շահեկան վայրկեան մը մէջ այսքան բուռն
թափով զրադիւն այս տեսակ խնդրով մը,
չստ յոռի տողաւորութիւն մը պիտի ընէ
զաւառին վրայ, որ պիտի մտածէ թէ
Ազգ. Ժողովն այնքան խնկած է որ իր
պարտականութիւնը մոռցած է, եւ այս
տեսակ անձնական հաշիւներով կը զրադիւն»
Ծանկիւրեան էֆ. անհրաժեշտ նկատեց
լսել անգամ մը Տ. Գէորգ Արքեպ. Երէց-
եանը, խնդիրին միանգամ ընդ միշտ վերջ
տալու համար:

Թեր եւ գէժ բուռն վիճաբանութենէ
ետքը, հուսկ ուրեմն ընդունուեցաւ բա-
նաձեւ մը, որ կ'ըսէ թէ՛ «Եկատեղով որ
Ազգ. Ժողովը սեւ է որոշում տուած չէ
Երէցեան Եպ.ի գործունէութեան բարո-
յական կողմին վրայ, մինչդեռ միւս կող-
մէ Ազգ. Երեսփոխաններ ծանրածանր եւ
նորանոր ամբաստանութիւններ կը տե-
ղան Երէցեան Ս.ի վրայ, որոնց ճշտումն
անհրաժեշտ է, անոր իրր երեսփոխան
ընտրութիւնը վաւերացնելու համար, Ժո-
ղովը կ'ընարէ խորհրդարանական քննիչ

յանձնամտով մը, եւ յիազարութիւն կուտայ անոր՝ ամէն քննութիւն կատարելու եւ արդիւնքը ժողովին բերելու»

Այս որոշումով փակուեցաւ ժողովը ժամ 6ին:

—

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ. — Ազգ. Վարչութեան որոշման համաձայն, Տ. Յովհ. Արքեպ. Արչարունիէ, Տ. Ղեւոնդ եւ Տ. Դրիգորիս Ծ. Վ. ներէ, Յ. Ստամպուլեան եւ Ե. Խօրասան էֆ. ներէ կազմուած պատուիրակութիւն մը անցեալ Եշ. այցելեց վարչապետի փոխանորդ Նէճմէտտին էֆ. ի, որուն պարզեց գաւառներու մէջ տիրող երկիւղը, եւ ժողովուրդին իրենց զիւղերէն հեռացած ըլլալը: յիշեցուց նաեւ Բաղէի ոճիրներուն յառաջ բերած խորին վիշաք, որուն դարման կը սպասէ ազգը իրաւամբ: Բաղէի, Վանայ եւ Մուշի կողմերը Քուրդերու միջեւ գաղտնի խորհրդակցութիւն կատարուիլը յիշուեցաւ, եւ քուրդ պէյերու պատժուիլը պահանջուեցաւ, մասնաւորապէս Քէօր Հիւսէյին փաշայի, Միր Մհէի, Մուսա եւ Գասըմ պէյերու, որոնք սարսափ ձգած են Վանայ, Շատախի, Մշոյ, Պուլանըզի եւ Բաղէի կողմերը: Նէճմէտտին պէյ յոսանքով խօսքեր ըրաւ, ըսաւ թէ գաւառի պաշտօնէութեան մէջ զգալի փոփոխումներ պիտի ըլլան, նոր միջոցներ ձեռք պիտի առնուին անպարտութիւնը տեսական ընելու համար, ոճրագործ աւազակները ձերբակալելու համար ամէն միջոց ի գործ պիտի գրուի, եւ ի հարկին նորէն զօրք պիտի զրկուի՝ ոճրագործները ձերբակալելու համար: Նէճմէտտին էֆ. հաւաստեց թէ կառավարութեան ջանքերուն արդիւնքներն ալ կը տեսնուին, միեւնոյն ատեն զիտել տալով որ պատգամաւորութեանց կողմէ խմբովին եղած այս տեսակ զիմումները տարբեր մեկնութիւններ կրնան ստանալ, հետեւապէս ազգը պէտք է վստահ ըլլալ կեդրոնի կառավարութեան վրայ: Պատգամաւորութիւնը վերստին չեղտեց միաբերու մէջ տիրող յուզումը, որուն ազգած խոր տպաւորութեան տակ, Ազգը՝ նարկագ-

րուած՝ կուգայ կը դիմէ կառավարութեան: Նէճմէտտին պէյ կրկնեց իր յուսանքով խօսքերը եւ յանձնարարեց իր բարեւերն հաղորդել Տեղապահ Ս. Հօր: * Ազգ. Ժողովի վերջին նիստին մէջ Սթամպուլեան էֆ. յայտարարեց թէ իբրեւ առաջին արդիւնք իրենց զիմումներուն, կառավարութիւնը Խոյթի կողմը զրկուած երկու վաշա զինուորէն զատ, երկու վաշա զինուոր ալ կը զրկէ Շատախի եւ Պուլանըզի կողմերը: Դժբախտաբար այս լուրին առթած գոհունակ տպաւորութիւնը կը չհզօրանայ անցեալ Եթ. օր Պատրիարքարան հասած հեռագրով մը, որով իրենց վիճակին դառնութիւնը նկարագրելով, կ'աւելցնէին թէ Շաքիրի եւ Միր Մհէի նման չարագործներ եթէ չվերցուին Շատախէն կամ չըջականերէն, անկարելի է իրենց համար այդ կողմերը բնակիլ, հետեւաբար որոշած են գաղթել: Այս ընդարձակ հեռագիրը նոյն օրն իսկ Պատրիարքարանէն ներկայացուեցաւ Բ. Դուռ: Բաղէի առաջնորդը կը հեռագրէ թէ ցարդ կուսակալին ձերբակալած եւ Կեդրոն զըրկած աւազակներուն թիւը 11ի հասնի: Այս ձերբակալութիւններն եւ հետապնդումները նպաստաւոր ազդեցութիւն կ'ընեն ժողովուրդին վրայ:

* Բաղէի Կուսակալը Յունիս 13 թուով կը հեռագրէ Բ. Դրան. — «Իստական Իսխանութեան կողմէ փնտառող փախստական չարագործներէն քսան հոգի ձերբակալուած ըլլալով, վաղը կ'եդրոնի բանտը պիտի փոխադրուին»:

* Սլիվանէն (Տիարպէթի) կը գրեն թէ Տիւտան պիւղի Քուրդ ընտկիչները միահամուռ յարձակելով Հայ գիւղացիներուն վրայ, վերաւորեցին 15 հոգի. վերաւորներուն վիճակը խիստ ծանր է:

ՏԵՍՈՒՉ ԽՈՐՀՈՒԴՆԵՐԸ. — Անցեալ Ուրբաթ օր, Ազգ. Ժողովոյ գումարումէն առաջ Քաղաք. եւ Խան Ժողովները նիստ գումարելով, ընտրեցին եւ կազմակերպեցին Տեսուչ Խորհուրդներն եւ Հոգաբարձութիւնները՝ հետեւեալ կերպով. —

Ուսումնական կորուստը. — Տեսարք Պետրոս Հալաճեան, Հայկ Խոճասարեան, Լեւոն Սեղրոսեան, Յովսէփ Նուսուֆեան, Յովհաննէս Յակոբեան, Ստեփան Կուրտիկեան Տօքթ. Գառնիկ Կիւլպէնկեան:

Տնեսական կորուստը. — Տեսարք Ստեփան Գարեան, Ստեփան Թէլիբեան, Եղուարդ Շիրինեան, Յակոբ Ունճեան, Խաչիկ Սըլվաճեան, Օրնիկ Տէրունեան, Վրամշապուհ Մանուկեան:

Եղեմէից Հոգաբարձութիւն. — Տեսարք Լեւոն Սաաթճեան, Արամ Թագաւորեան, Վահրամ Պոյաճեան, Յովհաննէս Դարաբեան, Մոգոստոս Նարիկեան, Սարգիս Սուրբ, Դարեգին Տէմիրճիպաշեան:

Դասաւանդական կորուստը. — Տ. Տ. Խորէն Ա. Բէնյ. Յարութիւնեան, Արիստակէս քնյ. Հիսարիկեան, Տաճատ քնյ. Փաշաեան, Զարմայր քնյ. Կէղիւրեան, Տեսարք Սարգիս Էմէրեան, Սարգիս Դարապոյ. Տօքթ. Կորապետ Մոթաֆեան, Համբարձում Պոյաճեան (Մուրատ):

Հիւանդանոցի Հոգաբարձութիւն. — Տեսարք Բարսեղ Աւետիսեան, Կորապետ Խանճեան, Ներսէս Օհանեան, Յարութիւն Ալեքեան, Յովակիմ Արիկեան, Տօքթ. Դրբիգոր Ճէլալեան, Տօքթ. Դրբիգոր Ֆրնտրդեան, Մագոստոս Շահպազ, Անտոն Թարազ:

ՍՕՅԻԱԼԻ Հայոց եկեղեցին զոր իր յարակից մասերով անցեալ տարի Պաշտպան Կառավարութիւնը 60,000 Քր.ի գնել կ'ուզէր, տեղւոյն Հայերուն դիմումին եւ Ազգ. Պատրիարքանի բողոքին վրայ դնահատիչ յանձնախումբի մը քննութեան ենթարկուած էր. այժմ գոհունակութեամբ կ'իմանանք որ նոյն յանձնախումբը 200 հազար Քր.ի գին որոշած է: Տեղւոյն Հայերը կառավարութեան դիմած են որպէս զի յարմար գետին մը չնորհուի, որուն վրայ ստացուած գումարով հոյակապ եկեղեցի մը եւ վարժարան մը պիտի շինուի:

ԳԱՆՏԻԼԻԻ Հայոց եկեղեցին մէջ Կրօնական Ժողովոյ հաւանութեամբ անգ-

լիական Ժողովուրդն ամբարն եղանակին հոգեւոր պաշտամունք պիտի կատարէ:

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿ.ի մասին Կրօն. Ժողովոյ հայեացքը զոր անցեալ չաթու ծանուցինք, որոշուած է հաղորդել Ս. Էջմիածնայ Կաթող. Տեղակալին, Ամերիկահայոց վիճակին մասին հարկ եղած կարգադրութիւնը ընելու համար: Միւս կողմէ որոշուած է զրել Կիրիկիոյ Ս. Կաթողիկոսին, որպէս զի հրաւիրէ Տ. Մուշեղ եպիս.ը Կիրիկեան վիճակներուն մէջ պաշտօնավարելու, նկատելով որ իր անուան շնորհ խնդիրներ ծագում առած են Ամերիկայի մէջ:

ՎԱՆԱՅ Առաջն. Տեղապահ Տ. Յովսէփ եպիս. Սարաճեան չարթուս կը մեկնի Պոլսէն իր պաշտօնավարելին:

ԿԻՐԻԿԻ Դաւառ. Ժողովը վիճակին առաջնորդ ընտրել է քուէից մեծամասնութեամբ Ամասիոյ առաջնորդ Տ. Դէորդ վրդ. Իւրանոսեանը: Կիւրին Կիրիկիոյ Վիճակ ըլլալով, ընտր. տեղեկագիրը Կիրիկիոյ Ս. Կաթողիկոսին հաղորդուելով, անկէ պիտի գրուի Պատրիարքարան:

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ Դարերար Պ. Ա. Մանթաշեանի՝ Թրքահայ ուսանողութեան եւ Կարօտեալներու ըրած օժանդակութեան համար, ինչպէս Կարօտեալութեան, Տ. Յովսէփ եպիս. Սարաճեան Կիրակի օրը պատարագից Մայր Եկեղեցւոյ մէջ, եւ գեղեցիկ քարոզող մը զրուատեց. հանդուցեալին ձգքերը Պատարագէն վերջ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ: Նոյն օրը Տեղապահ Ս. Իրողութիւնը հետագրեց Տիգրիս Մանթաշեան գերդաստանին, եւ ի դիմաց Թրքահայոց ցաւակցութիւն յայտնեց:

ՀԱՅ-ՀՌՈՍԷՍԿԱՆ Ստեփան Լ.Ֆ. Բարունակեան իր կնոջն եւ զաւակներուն հետ Ալզ. Պատրիարքարան դիմելով, Մայրենի Եկեղեցին վերադարձաւ:

ՅՈՐԵԼԵԱՆ. — Գահիրէի Լուսաբեր Արեւին մէջ հաճոյքով կը կարդանք թէ ծառօթ բանաստեղծ եւ բաղմամբաստակ ուսուցիչ Յովհաննէս Էփ. Սէքեանի Կրօնական Ժողովուն կողմէն Գահիրէի մէջ:

Յորեկանի յանձնարարութեամբ կազմուած է արդէն Գահիրէի եւ Ալեքսանդրիոյ տկա-
նաւոր զբոսականներէն եւ ազգայիններէն :

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ, Մայր-
Վարժարանի համակրելի Տնօրէնը, ուրա-
խութեամբ կը ծանուցանենք թէ Ալլա-
Հիւանդանոցէն ելած է, կատարելապէս
բուժուած անցեալ ձմեռ Պէպէքի զաւի-
ժայրին վրայ ունեցած աղետալի անկու-
մին հետեւանօք ստըին ծանրապէս վնաս-
ուելէն, որ զինքը ամիսներէ ի վեր ան-
կողմի մէջ մնալ հարկադրած էր :

Ս. ԷՋՄԻԱՇՆԻ մերասն Տ. Գարեգին
Վ. Յովսէփեան շարժուա կ. Պոլիս եկաւ,
այստեղ եւ ապա Երուսաղէմի մէջ Հայ-
կական ձեռագիրներ լուսանկարելու եւ
նկարներ իրենց իսկական գոյնով նկարի-
լու, կարեւոր պատմութեան համար : Այս
աշխատութիւնը պիտի ամիսիւնի հասորի
մը մէջ, որ պիտի հրատարակուի Բա-
զուցի տիկնոջ մը 5000 լուրի նախա-
ստութեամբ : Պ. Գարեգին Վրդ. Դշ.օր
այցելեց Ղալաթիոյ Ազգային Մատենա-
դարանը, եւ աչքէ անցընելով ձեռագիր-
ները, լուսանկարեց մագաղաթէ ձեռա-
գիրներու ծաղկենկարները :

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՐ այս Դշ.ի նիստին
մէջ որոշեց չընթերցանելու զրկել զա-
ւառական առաջնորդութեանց, որպէս զի
զինուորական տարիքի մէջ գտնուող զին-
ուորացիներու նշանախօսութիւնը եւ պա-
կազմութիւնը չկատարեն : Որոշեց Բե-
րայի երեք Նիկողոսիներու Դպրաց Դասերը
մշակելով մէկ Խորհուրդի տակ, ինչպէս
նոյն Նիկողոսիները կը մատակարարուին մէկ
Թաղ. Խորհուրդով :

ՊԻՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ երեսուն
եւ հինգերորդ վկայականաց յանձնման տա-
սեկան հանդէսը կատարուեցաւ երէկ
(Ուր. 17 Յունիս) նախագահութեամբ
Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Դուրեանի,
Գրական եւ ղեկարուեցողական վայելքի
քաղցր ժամեր անցուցին զիրկայք այդ
հանդէսին մէջ, ուր ձայնական եւ գոր-
ծիական երաժշտութեամբ համեմատեցան
Տնօրէնին, Կուրաիկեան էֆ.ի, եւ նախա-

գահ Սրբազանին հիւթեղ բանախօսու-
թիւնները :

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ վարժարաններու քրե-
նութիւնները, որոնք սկսած էին Յունիսի
սկիզբէն, չարունակուեցան ընդհանուր
գոհունակութեան մէջ առաջ, եւ կը վեր-
ջանան յառաջիկայ շարժուա :

Ընթացաւարտներու աւարտական շա-
րադրութիւնները պիտի կարգացուին
յառաջիկայ ուրբաթ կէսօրէն վերջ, իսկ
վկայականաց քաջութեամբ պիտի կատարուի
յառաջիկայ կիրակի, յունիս 26 :

ԵՐԵՎ ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

Մարգուանի մէջ յունիս 30ին, Թարգ-
մանչաց տօնին օրը, կը կատարուի Յորեկ-
եանական հանգիւր քաղաքին երեք վաս-
տակաւու ուսուցիչներուն, Տեառց՝

Պօղոս վարժապետ Անդրեասեանի
(յիսնամեակ, 1861-1911)

Հաճի Բարսեղ Անեքեպեանի (քսանը-
հինգամեակ, 1885-1911), եւ

Մառիկոն վարժապետեանի (քսանը-
հինգամեակ, 1885-1911) :

Ազգին երկարամեայ վաստակաւոր
կրթական պաշտօնականներու աշխատու-
թեանց յորեկեանական հանդէսով մը պնա-
հատուած, ինքնին այնքան յուսադրող գա-
ղափար մըն է, որ գոհութեամբ կը դի-
տենք այդ գաղափարին տարածուելը գա-
ւառներուն մէջ :

Այս ա թիւ յորեկեանական յանձնա-
խումբ մը կազմուած է, նախագահու-
թեամբ ծանօթ զբող Տիար Գաղիկ օղան-
եանի, որուն պէտք է ուղղուին շնորհա-
ւորութիւն, նուէր եւն.

Ապահով ենք, նոյն յանձնախումբի
անդամոց հետ, թէ այս ձեռնարկը սիրա-
լիւ արձագանդ մը պիտի գտնէ յարգելի
յորեկեաններու բազմաթիւ աշակերտնե-
րուն եւ կրթասէր հասարակութեան բո-
լոր խաւերուն մէջ :

Արամատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԻԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ՔԶՆՅ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԵՄԱՃԵԱՆ

54071-1-10

ՍՏԱՅՈՒՄԸ ԳԻՐԲԵՐ

ԵԱԶՍՏՈՒՐ ՍԲՈՎԵՍՆ. — Գրեց Ներսիս Բաղդասարյան, Բագու : Կենսագրական մանրակրկիտ անդեկու-թիւններ՝ վերջ Հայաստանի անմահ հեղինակին վրայ, սկսեալ իր մանկութեանէն : Տպագր. Տփղիս, 1911 : Դիմել հեղինակին՝ Բագու, կամ Տփղիս՝ Կեդր. գրավաճառանոց : Գին 75 կոպիկ :

✱ ԴԱՐՄԱՆԸ՝ հոգեւոր կեանքի զարգացման եւ արդիւնք հսկակօրէն ցարժեալն — Հմտալից եւ օգտակար գործ Զմիւռնիոյ Աւետ. Հայոց հովիւ Վեր. Կարապետ Պ. Աղանալեանի : Տպագր. Բագու, 1911, Գին 4 զրշ. :

ՈՒՍԱՆՈՂ, ամսաթերթ մանկավարժական, գրական, գիտական եւ բանասիրական : Հրատարակուեցաւ 5րդ թիւը, Մարտ 1, 1911 :

✓ ԱՆՊԱՏԿԱՆ ՄԱՐԴԸ. — Գրեց Լուսիկ Պետր Լուսիկեան. — Խիստ հետաքրքրաշարժ եւ հրահանգիչ պատմութիւն մը, որ երիտասարդ հեղինակին քով կը մատնանշէ վիպագրելու մասնաւոր ընդունակութիւն մը : Գին 3 զրշ. : Կը գրտնուի ամէն գրավաճառներու քով :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐԾԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ ԻՐ

Պատմութիւնը, Վարդապետութիւնը, Վարչութիւնը, Բարեկարգութիւնը, Արտոդարութիւնը, Գրականութիւնը ու ներկայ կացութիւնը.

Գաղղիներէն հրատարակուած եւ այժմ Հայերէնի վերածուած՝ յոյժ շահեկան աշխատասիրութիւն մը, բաղկացած 270 մեծադիր էջերէ : Գին 15 զրշ (բոսթի ծախքով 18 զրշ. կամ 4 Քր.) : Կեդրոնաւանդի՝ Վ. եւ Հ. Տէր-Ներսիսեան վաճառատուն, Պահճէ Գաբու, Կ. Պոլիս : Կը գտնուի նաեւ ամէն գրավաճառներու քով :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆԻ

1. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. — Ի պէտս բանասիրաց եւ բարձրագոյն ուսանողաց, գին 7 զրշ.

2. ՏԻԵԶԵՐԻ ՈՒ ՓԻԼԻՍՈՓՍՈՒԹԻՒՆԸ. — Իբրիթ թէնի հատուածն անմահասիրոյ՝ գին 1 ու կէս զրշ :

Կը վաճառուին Կ. Պոլիս Գըլըճեան գրատունը, եւ մեծաքանակ հեղինակին քով : 2-3